կաթոլիկների թեմական կազմակերպութեան գործը որոշ կերպարանք ստացաւ, թեմական ատեանը և թեմի կառավարիչը պէտք է բնակութիւն ունենան Թիֆլիզում. գ. Վիեննայի Մխիթարեան միաբանութեան անցեալ տարի ընտրուած աբբայ Հ. Գրիգորիս Գովրիկեանը այս տարի հաստատուելով իւր պաշտօնում, յունիսի 12-ին ն. տ. մեծ հանդիսով օծուել է Վիեննայի առաքելական նուիրակից եպիսկոպոս Մծբինի արքեպիսկոպոս տիտղոսով։ Օծման հանդէսը կատարուել է լատին ծէսով։

Որքան փոյթ է տարուել Թերզեանի կաթողիկոսացումն հայ եկեղեցու արարողութեամբ կատարել, այնքան անտարբերութիւն է եղել Վիեննայի Մխիթարեան աբբայի օծման դէպքում, որ հայ կաթոլիկների շրջանում անկատ չէ անցել։ Զգիտենք ինչին վերագրել այս հանգամանքը, հարկի անհրաժեշտութեանը, թէ դէպի ազգային եկեղեցու արարողութիւնները անտարբերութեան։ Վիեննայի աբբան կարող էր իւր ձեռնադրութիւնն ու օծումն ստանալ Կ. Պոլսոյ հայ-կաթոլիկ պատրիարք կաթուղիկոսից։

ՌՈՒՍ ՊՐԱՒՈՍ. ԵԿԵՂԵՑԻ

Առաջնորդների ռոճկի հաւասարութեան խնդիր

Պետական դումայում հարց էր դարձել թեմական առաջնորդների ռոճիկները հաւասարեցնել։ Кавказъ-ը (№220) առնելով լրագրներից հաղորդում է, որ Սրբ. Սինոդի կազմած յանձնաժողովը, որի նախագահն է Կիեւի մետրոպոլիտ Ֆլավիանը, եկել է այն եզրակացութեան, որ թեմական իւրաքանչիւր առաջնորդ ստանայ տարեկան 6000 ռուբլուց ոչ պակաս։ Առաջնորդներին այդ քանակութեամբ ռոճիկ տալու համար յանձնաժողովի եզրակացութեամբ պէտք կը լինի, դեռ մինչև 33,500 ռուբլի, որը կարելի է գանձել 1, այն թեմերի եպիսկոպոսարանների, որոնց եկամուտները աւելի են, 2, մայրավանքերից (լաւրա) և 3 վանքերից։ Յանձնաժողովի նախագահ Ֆլավիան մետրոպոլիտը յայտնեց, որ Կիեւ—Պեչերեան մայրավանքի արդիւնքի

երրորդ մասը. տարեկան 40,000 ռուբլուց աւելի է, և որ այժմ ստանում է միտրոպոլիտը, պէտք է բաւականանայ 1/3-րդ մասով, բայց այն պամանով, որ մնացած գումարը՝ գործադրուի մայրավանքի բազմաթիւ (մօտ 1,300 հոգի) միաբաններին ռոճիկը աւելացնելու համար։ Սրբ. Սինոդը, որի բարեհայեցողութեանն է առաջարկուած յանձնաժողովի աշխատանքը, նախքան յանձնաժողովի եզրակացութիւնների մասին վճիռ դնելը, բարւոք գտաւ թեմական առաջնորդների կարծիքը իմանալ։ Այդ իսկ նպատակով այժմ գրւում է առաջնորդներին, որ նրանք երեք ամսուայ ընթացքում հաղորդեն Սինոդին իրանց կարծիքները։

Կոնսիստորիաների գործավարութեան բարեփոխումն

Կոնսիստորիաների գործավարութեան բարեփոխանմ համար Церк. Вѣст.-ից քաղում ենք հետևեալը։ Սրբ. Սինոդը քննելով օրեր-պրոկուրորի առաջարկութիւնը կոնսիստորեաների գործավարութիւնը դիւրացնելու համար և ըստ ամենայնի համակերպուելով այդ առաջարկութեանը, տարւոյս յուլիսի 6—9 որոշմամբ սահմանեց նպատակայարմար համարել հոգևոր կոնսիստորիաների կանոնադրութեան հետևեալ բացատրութիւնները.

1. Ծխական հովուական գործավարութեան թղթերի, որոնց տնօրէնութիւնը ենթարկւում է անմիջապէս թեմական առաջնորդներին, կատարումը չպէտք է յանձնուի կոնսիստորիային, այլ առաջնորդի դիւանին։ Եթէ այդպիսի գործերի վճիռները պէտք ունեն լրացուցիչ տեղեկութիւնների կամ յայտնի պահանջների կատարման, այն ժամանակ առաջնորդները գործին վերաբերեալ թղթերը ուղարկում են կոնսիստորիաներին մակագրելով թղթերի վերայ հարկաւոր եզրակացութիւնը։

2. Կոնսիստորիան իւր ամբողջ պատասխանատուութեամբ առանց կանխապէս հաստատութեան առաջարկելու, ի կատար է ածում անկախօրէն հետևեալ որոշումները ա. այն թղթերի մասին, որոնց կատարումն ճշգրիտ սահմանուած է օրէնքներով և կանոններով. բ. առաջնորդների

այն եզրակացութիւնների մասին, որոնք ըստ էութեան գործի քննութիւն էլ չեն պահանջում և վերջնական նշանակութիւն ունեն. գ. մետրիքական վկայականներ տալու և վկայականները վաւերացնելու խնդիրների մասին, երբ կասկած չկայ. դ. ուրիշին յանձնուելու գումարների ստանալու և ուղարկելու մասին. ե. գործավարութեան ընթացքում գործին վերաբերեալ ստացուած թղթերի մասին, որոնք չեն փոխում գործի էութիւնը։ 2. կէտում սահմանուած կանոնից բացառութիւն են կազմում այն հարցերի վերաբերութեամբ թղթերը, որոնք վերաբերում են ազանդաւորութեան, հնածէսութեան և քարոզչութեան։ Այս գործերի վերաբերութեամբ այս կամ այն որոշումներն ի կատար են ածւում միայն առաջնորդի նախապէս հաստատութեան առաջարկելուց յետոյ։

3. Այն կոնսիստորիաներում, ուր գործերի շատութիւնը արգելք է լինում գործավարութեան արագ ընթացքին, առաջնորդները իրանց բարեհայեցողութեամբ թոյլ են տալիս կոնսիստորիաների ատենադպիրներին պատշաճ կարգադրութիւնն անել այն թղթերի վերաբերութեամբ, որոնց պէտք է ունենալ միայն ի տեղեկութիւն, կամ ներկայացուած են առանց մարկաների, առանց վկայականների ևն. յետ դարձնել ըստ պատկանելոյն այն թղթերը, որոնք սխալմամբ կոնսիստորիա են ուղարկուած, և ի կատար ածել այն թղթերը, որոնք վերստուգութիւնների և ուրիշ հաստատութիւնների հետ հաղորդակցութեան պէտք ունեն։

4. Այն կոնսիստորիաներում, որոնք ծանրաբեռնուած են շատ գործերով, առաջնորդները կարող են սեղանների կառավարիչներին ազատել զեկուցումների սեղանային ցուցակը անմիջապէս վարելուց, այս պարտքը դնելով դիւանատան հմուտ աստիճանաւորների և ծառայողների վերայ։

5. Կոնսիստորիաները օրագիր կազմելիս՝ պէտք է խուսափեն աւելորդաբանութիւնից, բոլորովին աւելորդաբար ամբողջ գործը լրիւ արտագրելուց։

6. Կոնսիստորիաների անդամների վերահսկողութիւնը

սեղանների վերայ պէտք է լինի բացառապէս այն, որ կոնսիստորիաների որոշումներն, որ պատրաստում են սեղանի կառավարիչները, ճշդութեամբ համապատասխան լինեն ատեանի տուած համառօտ եզրակացութեանը։

7. *Կոնսիստորիաների ատենադպիրների իրաւունքն է շտապով սահմանուած ատիճանաւորների թեկնածուներ ընտրելը, դիւանական ատիճանաւորներ ու ծառայողներ և վարձկան գրագիրներ ընտրելը. նոյնպէս ատենադպրի իրաւունքն է որոշել ամսական ռոճկի, դրամական պարգևների, և դիւանական ատիճանաւորների, վարձկան գրագիրների նպաստների չափը։*

8. *Հոգևոր կոնսիստորեանների ատենադպիրները պարտաւոր են խուսափել ատեանի հետ հակաճառութիւնից, որ կը խանգարի գործի ընթացքը։*

1911 թ. Նախահաշիւ

(Церк. Вѣст. № 36. 37.)

Պետական Դումայի դիւանին յանձնուած է Սրբազնագոյն Սինոդին ենթարկուող հաստատութիւնների 1911 թուի մուտքի և ելքի նախահաշիւը։ Անցեալ 1910 թուի պէս մուտքի հաշիւն է 82,549 *ռ.* (?) *և ելքի նախահաշիւը՝* 37,566,984 *ռ.* (*անցեալ տարուանից* 3,581,502 *ռ. աւելի*)։ *Արտասահմանեան վանքերի Բեսսարաբիայում ունեցած կալուածների մուտքն ու ծախքը* 1911 *թուին կը հաւասարուի* 669,088 *ռ.։*

—Սրբազնագոյն Սինոդի օրեր-պտօղությունը մուծել է Պետական Դուման հետևեալ օրինագծերը. 1) *եկեղ. ծխական դպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների համար կենսաթոշակի դանձարկղ հաստատել.* 2) 1911 *թուին* 28000 *ռ. բաց թողնել Մոսկվայի Ս Փրկչի տաճարի աւանդատունը նորոգելու համար,* 3) 1911 *թուին շարունակել Ս. Պետերբուրգի Ս. Իսահակի տաճարի պահպանութեան համար լրացուցիչ նպաստի տարեկան* 8810 *ռուբլու տուչութիւնը,* 4) 1911 *թուից սկսած* 60,000 *ռուբլի բաց թողնել քաղաքների և գիւղերի ծխական հոգևորականու-*

թեան թոշակը աւելացնելու համար, 5) 1911 թուից սկսած 40,376 ռ. բաց թողնել որպէս նպաստ Ս. Պետերբուրգի Քրիստոսի Յարութեան տաճարի պահպանութեան համար. 6) Հոգևոր դպրոցական հաստատութիւնների պաշտօնեաների ռոճիկը աւելացնելու համար գանձարանից բաց թողնել տարեկան 232,000 ռ. այլև 1911 թուի դպրոցական հաստատութիւնների երկրորդ կիսամեակի համար բաց թողնել 116,000 ռ., 7) պետ. գանձարանից 500,000 ռ. բաց թողնել եկեղեցական դպրոցների շինութեան համար։ 8) պետական գանձարանից բաց թողնել 1,000,005 ռ. եկեղ. ծխական դպրոցների ուսուցիչների ռոճիկը 1911 թուին մեծացնելու համար, մինչև որ 1908 թ. մայիսի 3-ի օրէնքը կիրառութեան մէջ կը մտնի. իսկ 1912 թուից սկսեալ տարեկան 1,550,000 ռ.։ 9) պրաւոսլաւ տաճարների կառուցման վարկը 1911 թուականից սկսած տարեկան 50,000-ից 100,000 ռ. դարձնել։

Նոր փոխանորդութիւն.

—Սրբ. Սինոդը մտադիր է Վլադիկավկազի թեմի մէջ մի փոխանորդութիւն հաստատել քարոզչական նպատակով. նոր փոխանորդի բնակավայր Պեատիգորսկը սահմանելով։

Ծխական հոգևորականութեան ապահովութիւն

Սրբազնագոյն Սինոդը այժմ զբաղուած է ծխական հոգևորականութիւնը ապահովելու խնդրով։ Ծխ. հոգևորականութիւնը կազմուած պէտք է լինի երեք անձից, պէտք է ստանայ տարեկան—քահանան՝ 900 ռ. սարկաւագը՝ 600 ռ. և սաղմոսասացը՝ (տիրացու) 500—400 ռ. Այս չափը բաւարար պէտք է համարել միայն գիւղերի համար։ Եթէ ընդունենք 40-հազար գիւղական ծուխ, և իւրա քանչիւրի հոգևորական դասի համար 2000 ռ. վարձատրութեան գումար՝—կը տեսնենք, որ գիւղական հոգևորականութիւնը ապահովելու համար պէտք կը լինի տարեկան 80,000 ռ.։ 1911 թ. նախահաշուի համեմատ պետական գանձարանից պէտք է պահանջուի 14 միլիոն ռ.։ Հոգևոր վարչութեան և հաստատութիւնների ծախքը լրաց-

նելու համար դեռ պէտք կը լինի գտնել 65 միլ։ Ո՞ր-տեղից գտնել այդ ահագին գումարը, երբ հոգևոր վարչութեան եկամուտի գումարը 34 միլլիոն է. լրագիրը գըտնում է, որ այդ բացը պետական գանձարանից ծածկելը անհնարին է համարում. հնարաւոր է ծխական կանոնաւոր տուրք հաստատելը, որը պետութիւնը կարող է սահմանել հաստատուն ծուխների վերայ, և այդ ծանրութիւն պէտք է չլինի նրա համար, քանի որ ծխականներն իւրաքանչիւր հոգևոր կարիքների (մկրտութիւն, թաղում, պսակ և այլն) համար առանձին առանձին աւելի են վճարում.

Ուրեմն մնում է հոգևորականութիւնը ապահովելու համար նոր ձև մշակել, որ բաւական բարդ գործ է։ Տուրքի գանձումն պարտաւորական պահանջ դարձնել, թէ ծխականների համաձայնութիւնն ի նկատի ունենալ։ Տուրք պահանջելը ինչպէս և ամեն դրամական գործ տաղտկալի է, և այդ բանը ոչ պետութիւնը և ոչ էլ զեմստվոները յօժարութեամբ յանձն կառնեն։ Լաւ կը լինի այդ յանձնել ծխական կազմակերպութեան. այն ժամանակ ոչ ատիճանաւորներ և ոչ էլ առանձին ձեւականութիւններ պէտք կը լինին։ Բայց առաջ պէտք է այդ կազմակերպութիւնը հաստատել։

Լրագիրը հոգևոր տուրքի գանձումն թողնելով ծխի և նրա կազմակերպութեանը, և ընդունելով, որ ծխականների համաձայնութեամբ և ըստ կարողութեան պէտք է որոշուի ծխականների վերայ տուրքի քանակութեան չափը, վճռապէս չի որոշում թէ, ինչպէս և ումից, որ չափով պէտք է գանձուի։

—Միջնակարգ դպրոցների դասաւանդութիւնը. Մինոգը հաղորդել է պատշաճ վարչութիւններին կրօնուսոյցների ժողովի մշակած և Մինոգի վաւերացրած կրօնի դասաւանդութեան ծրագիրը միջնակարգ ուսումնարաններում։ Նոր ծրագրի համեմատ սահմանուած է կրօնի մի ընդհանուր պարտաւորական դասընթացք միջնակարգ բոլոր ուսումնարանների համար անխտիր, որ վարչութեան էլ պատկանէին։

Աշակերտների կրօնական—բարոյական դաստիարա-

կութեան նպատակով կրօնուսոյցը բացի կրօնի դասաւանդութիւնից պէտք է օգտուի բոլոր մատչելի միջոցներով թէ դասարանում և թէ դուրսը։ Պրաւոսլաւ աշակերտները տօն օրերին պարտաւորաբար պէտք է յաճախեն եկեղեցի։

—Հարաւային նահանգների ծխ. եկեղ. դպրոցների համար ռուս լեզուի դասագիրք. Սինոդի ուսումնարանական խորհրդը յանձնել է Կիեւի թեմական ուսումնարանական խորհրդին. Ռուսաստանի հարաւային նահանգների եկեղ. ծխ. դպրոցների համար ռուսերէն ընթերցանութեան գրքեր պատրաստելու հոգս տանել։ Մինչև հիմա այդ դպրոցներում կիրառութեան մէջ էին հիւսիսային նահանգների կեանքին յարմարեցրած դասագրքեր, և դրա համար էլ շատ հասկանալի չէին հարաւի բնակիչների համար։

—Կազանի քարոզչական ժողովի որոշումների նախնական քննութիւն. Կազանի արքեպիսկոպոս Նիկանորը ներկայացրել էր Սրբ. Սինոդին Կազանի միսիոներական ժողովի որոշումները։ Սինոդը այս որոշումները յանձնել է Սինոդի Միսիոներական առանձին խորհրդին նախնական քննութեան համար։ Խորհուրդը պէտք է բոլոր որոշումների վերաբերութեամբ ներկայացնի իւր եզրակացութիւնը։ Խորհրդի զբաղմունքներին, բացի Սինոդի վարչութիւնից պէտք է մասնակցեն ներքին գործերի նախարարութիւնից էլ ներկայացուցիչներ։

—Պրաւոսլաւ տօների կրճատումն. Պրաւոսլաւ տօների կրճատման օրինագիծը, որ կազմել էին անցեալ տարի Պետական խորհրդի մի քանի անդամները, և ընթացք չէր ստացել, այդ օրէնսդիր հաստատութեան մէջ, այս աշնանը պէտք է մուծուի Պետական Դուման. և խնդիրը պէտք է քննուի վաճառականական արդիւնաբերական տեսակէտից։ Տօների թիւը չլուսած քանակութեան է հասել, այն է. տարուայ մէջ 91 օր, որ մեծ հարուած է տալիս երկրի տնտեսական շահերին։

ՅՈՅՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Յայն Օրթոդ. եկեղեցիների միութիւնը Անգլիականի հետ։

Մշակում (№ 217) կարդում ենք.

„Голосъ Москвы" լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է. «Կ. Պոլսում մեծ սենսացիա գործեց անսպասելի կերպով տարածված լուրը այն մասին, որ տիեզերական պատրիարքութեան շրջաններում ծագել և լուրջ կերպով քննւում է ուղղափառ եկեղեցին անգլիական եկեղեցու հետ միացնելու հարցը։ Ասում են, որ այդ առիթով արդէն բանակցութիւններ են լինում տիեզերական պատրիարքարանի և անգլիական եկեղեցու միջև. նորերս անգլիական դեսպանի երկարատև խօսակցութիւնը պատրիարքի հետ կապում են այդ հարցի հետ։

«Կամենալով ստուգել այդ նշանաւոր տեղեկութիւնը, ես դիմեցի տիեզերական պատրիարքութեան բարձրաստիճան հոգևորականին, որից ստացայ հետևեալ ցուցմունքները։

«—Այդ լուրը կատարելապէս ճիշդ է։ Սակայն ի զուր են աշխատում կապել Նրան պատրիարքութեան ներկայ ծանր դրութեան հետ։ Պատրիարքութեանը վաղուց արդէն զբաղեցնում է ուղղափառ եկեղեցու միութեան հարցը անգլիական եկեղեցու հետ։ Որքան լուրջ է այդ, երևում է նրանից, որ պատրիարքութեան մէջ արդէն 12 տարի գործում է յատուկ յանձնաժողով, որ բաղկացած է մեր ամենալուսաւորուած հոգևորականներից։ Բացի դրանից Լոնդոնում մեր կղերականներից մէկը՝ Երօֆէյ Տէկնօպուլօ վարդապետը արդէն մի քանի տարի հրատարակում է այդ հարցին նուիրուած և միութիւն քարոզող մի ամսագիր «Եկեղեցիների միութիւն» անունով։

«—Սակայն ի՞նչու անգլիական եկեղեցին է ընտրուած այդպիսի միութեան համար։

«—Որովհետև բոլոր օտարադաւան եկեղեցիներից նա տարբերւում է ուղղափառներից դոգմատիկան կողմից և այդ տարբերութիւնները ամենից պակաս էական են։ Այդ հարցը, չեմ ծածկի, այս րոպէիս ևս, Նրան մանրամասն քննելուց յետոյ յանձնաժողովում, դեռ շատ դժուար է։ Սակայն այդ մտքի իրագործումը վերոյիշեալ պատճառով այնուամենայնիւ աւելի հեշտ է, քան թէ լինէր, օրինակ, ուղղափառ եկեղեցու հետ։ Մանաւանդ որ անգլիական կրթուած դասը և հոգևորականութիւնը Կէնտրբէրիի արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ վաղուց արդէն ձգտում են այդ բանին և պատրաստ են ամեն

աջակցութիւն ցոյց տալ այդ նպատակին հասնելու համար։ Ինչ վերաբերում է մամուլի ինստիտուտներին և սպառնալիքներին, որ ուրիշ եկեղեցիներ չեն գնայ պատրիարքութեան ետևից, ի հարկէ, այդպէս կարող են մտածել միայն եկեղեցական գործերում քիչ հասկացող մարդիկ։

«Պատրիարքութիւնը վատ ծառայութիւն կը մատուցանէր բուն-քրիստոնէական գաղափարին, եթէ միութիւնը մէկ եկեղեցու հետ աւելի մեծ անջատումն առաջացնէր միւսի հետ։ Պատրիարքութիւնը երբէք այդպէս անմիտ չէր կարող վարուել։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ հարցն իր էութեամբ այլ կերպ չէր կարող վճռուել, եթէ ոչ տիեզերական ժողովում և հետևաբար՝ միայն ռուս և այլ աւտոկէֆալ ուղղափառ եկեղեցիների համաձայնութեամբ։

«Վերջին տեղեկութիւնների համեմատ, պատրիարքութեան մէջ գոյութիւն ունեցող սինոդը որոշեց պաշտօնապէս դիմել Ցունաստանի, Բուլգարիայի և Սերբիայի ուղղափառ եկեղեցիներին՝ առաջարկելու մասնակցել ուղղափառ եկեղեցին անգլիական եկեղեցու հետ միացնելու հարցի քննութեանը»։

ՀՌՈՄԷԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Քահանաների տեղափոխութեան նոր կանոններ։

Մինչև վերջին ժամանակները կաթոլիկ քահանաները նշանակուելով ծուխերի վերայ եկեղեցական օրէնքով անփոփոխելի էին. դատարանով կարելի էր փոխել նրանց։ Հռոմի կոնսիստորիական ժողովը պապի հաստատութեամբ տարեւոյս օգոստոսի 20-ին, ն. տ. հրատարակել է մի հրովարտակ, որով եպիսկոպոսները կարող են ուզած ժամանակ փոփոխել քահանաներին մի ծուխից միւսը։ Այսպիսով խզուում է քահանայի և ժողովրդի միջև հոգևոր կապը, և քահանաները դառնում են եպիսկոպոսների կամաւորուկ պաշտօնեաներ։

Եպիսկոպոսները քահանային հովուութիւնից, ըստ հրովարտակի, կարող են հեռացնել պատճառելով.

1. Բժշկական վկայականով հաստատուած հոգեկան հիւանդութիւնը։ 2. անփորձութիւնը և անկրթութիւնը, որոնք անընդունակ են դարձնում քահանայական պաշ-